«ՇԻՐԱԿԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ.
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ»
(9-րդ միջազգային գիտաժողով՝ նվիրված ՀՀ անկախության
25-ամյակին)

2016 թ. սեպտեմբերի 24–25-ին Գյումրիում գումարվեց «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնախնդիրներ» թեմայով միջազգային 9-րդ գիտաժողովը, որը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների (ՇՀՀ) կենտրոնը ԳԱԱ նախագահության և ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ: Այն նվիրված էր ՀՀ անկախության 25-ամյակին: Գիտաժողովին մասնակցում էին 104 գիտնականներ՝ ՀՀ գիտական, կրթական տարբեր ինստիտուտներից, կենտրոններից, բուհերից, ինչպես նաև՝ Ռուսաստանից, Ուկրաինայից, Վրաստանից, Լիբանանից, Լեհաստանից, Գերմանիայից:

Գիտաժողովի բացման հանդիսավոր արարողությանը ողջույնի խոսքով հանդես եկան Շիրակի հոգևոր թեմի առաջնորդ Միքայել եպիսկոպոս Աջապահյանը, *Շիրակի մարզպետ* Հ. Սիմոնյանը, *Գյումրու քաղաքապետ* Ս. Բալասանյանը*: ՇՀՀ կենտրոնի տնօրեն* Ս. Հայրապետյանը, *խոսելով Շիրակի պատմամշակութային ծովածավալ ժառանգության տարբեր իրողությունների մասին, կարևորեց այն փաստը, որ վերջին երկու տասնամյակում շիրակագիտությունն անխզելիորեն կապված է նաև Գյումրիում ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի գործունեության հետ:*

Գիտաժողովի լիագումար նիստում հանդես եկան ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ա. Մելքոնյանը, *բ. գ. դ.* Դ. Գասպարյանը, *Ադիգեյի (Ռուսաստանի Դաշնություն) պետական համալսարանի պրոֆեսոր, պ. գ. դ.* Ռ. Կանդորը, *արվ. թեկն.* Հ. Հարությունյանը, *ԳԱԱ թղթակից անդամ* Մ. Հասրաթյանը, *Բերդյանսկի (Ուկրաինա) պետական համալսարանի դոցենտ, բ. գ. թ.* Վ. Շկոլան*:*

Գիտաժողովի աշխատանքները ծավալվեցին հինգ մասնաճյուղերում:

1. Հնագիտություն, մարդաբանություն, վիմագրություն

Թեմատիկ լայն շրջանակներ էր ընդգրկում հատկապես հնագիտական նյութը՝ Կուր-արաքսյան խեցեղեն (Ա. Ազիզյան), *Շիրակի մարզի Սպանդարյան գյուղում հայտնաբերված մ. թ. ա. XI–IX դդ. վերաբերող գտածոներ* (Ի. Ավագյան, Ա. Փիլիպոսյան), *Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղեն* (Ա. Գաբրիել-

յան), *Մեծ Մեպասարի վաղբրոնզեդարյան վանակատից նետասլաքներ* (Լ. Եգանյան), *Երևանի Ակրացիա թաղամասի և Նորագավիթ գյուղի միջև հայտնաբերված Օլդուվայան մշակույթ՝ յուրահատուկ քարե գործիքների համալիրով* (Բ. Երիցյան), *IX–X դդ. ջնարակած խեցեղեն կենտրոնների պատմաքննական արժևորում* (Ա. Ժամկոչյան), *ըստ վաղ միջնադարյան աղբյուրների հայոց ամրությունների տիպաբանական դասակարգման փորձ* (Հ. Խաչատրյան), *Ախուրյանի ավազանի ամրաշինական կառույցների մասին պատմագրական նյութի քննություն* (Բ. Վարդանյան)*:*

Հնագետների խմբի կողմից ներկայացվեց նաև Ազատանի հնագիտական հուշարձանը, որը գոյատևել է ուշ բրոնզի III փուլից մինչև հելլենիստական ժամանակաշրջանը: Այն հնարավորություն է ընձեռում նույն տեղում դիտարկել մ. թ. ա. XIII-ից մինչև հելլենիստական ժամանակաշրջանի նյութական մշակույթի, ճարտարապետության, շինարվեստի, տնտեսական կյանքի, դամբարանների կառուցվածքի, թաղման ձևերի ու ծեսերի փոփոխություններն ու զարգացումը: Մարդաբանական նորագույն հետազոտությունների արդյունքները վերաբերում էին Շիրակում ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանին, ինչպես նաև միջնադարյան Հայաստանի մշակույթին:

Գիտնականները արծարծեցին աղբյուրագիտական նորահայտ մի շարք փաստեր. Օշականի միջնադարյան հուշարձանների, մասնավորապես Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի անտիպ մի ձեռագրի մասին խոսեց Ս. Ադամյանը*: Մրենի, Անիի, նաև Բջնիի իրավական բնույթի արձանագրությունները, ըստ* Ա. Մանուչարյանի*, հուշում են, որ 1251 թ. բուն Հայաստանում, հավանական է, Անի մայրաքաղաքում, հայոց և վրաց ամիրսպասալար Շահնշահ Ա Զաքարյանի գլխավորությամբ գումարվել է տեղական եկեղեցական ժողով, որտեղ հաստատել են Սսի Բ գումարման կանոնները ու կարևորել պայքարը կաշառակերության, անարժան և տարիքային անհամապատասխանությամբ ձեռնադրությունների դեմ: Վերծանելով Հոռոմ գյուղում 1861 թ. կառուցված եռանավ բազիլիկ եկեղեցու որմերից ԺԹ դարի երեք արձանագրությունները՝* Ա. Հարությունյանը *պնդում է, որ դրանք 1826–1828 թթ. ռուս-պարսկական և 1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմների հաղթական ավարտի քարեղեն վկայագրերն են, որոնք իրենց կերպի մեջ եզակի են տվյալ ժամանակաշրջանի համար:*

2. Պատմագիտություն, ժողովրդագրություն

Գիտաժողովի աշխատանքների մեջ ներառված էին թեմաներ հայ ժողովրդի պատմության ամենատարբեր շրջանների վերաբերյալ՝ դրանք համալրելով նոր դրույթներով ու փաստերի նորովի մեկնաբանությամբ: Հիմնանյութը, անշուշտ, պատմական Շիրակն էր ու հատկապես Ալեքսանդրապոլի գավառը:

XIX դ. վերջերին ցարիզմը որոշակի քայլերի դիմեց Հայաստանյայց եկեղեցու իրավունքները սահմանափակելու համար: 1903 թ. հունիսի 12-ին հաստատված օրենքով եկեղեցուն պատկանող անշարժ գույքն ու ավանդներն անցան պետական համապատասխան նախարարությունների տնօրինությանը: Օրենքն առաջ բերեց աշխարհասփյուռ հայության արդարացի ընդվզումը: Դրան նպաստած Ս.Դ. Հնչակյան կուսակցության «Արագած» մասնաճյուղի 1903 թ. գործունեությունը արխիվային նորագույն փաստաթղթերով լուսաբանվեց Ա. Հայրապետյանի *հաղորդման մեջ: Ըստ* Գ. Այվազյանի, *Ալեքսանդրապոլի հասարակական միտքը 1850–1880-ական թվականներին հայրենիքում մնալու, համախմբվելու, հայկական պետությունը հզորացնելու, ամուր լինելու, քաղաքակրթական բարձր արժեքներին հաղորդակցվելու, միմյանց խնայելու, խաղաղ գոյակցելու պատգամներ է թողնում իր ուսումնասիրողներին: XIX դարի Շիրակին էին նվիրված նաև* Հ. Մուրադյանի, Ա. Շահինյանի *հաղորդումները: Խոսելով 1918–1921 թթ. Ալեքսանդրապոլի գավառում թուրքական ժխտողական քաղաքականության դրսևորումների մասին՝* Կ. Ալեքսանյանը *կարևորեց այն, որ թեև միջազգային գիտական շրջանակներում ժխտողականությունն ընկալվում է որպես ցեղասպանության վերջնափուլ, երբ ազգի ոչնչացումից հետո արմատախիլ են արվում ազգի մշակույթը և պատմական հիշողությունը, Թուրքիայում այն դրսևորվել է ցեղասպանության իրականացման հետ միաժամանակ: Նույն ժամանակաշրջանին էր վերաբերում* Գ. Մախմուրյանի *հաղորդումը՝ ԱՄՆ բարեգործական կոմիտեների ծավալած գործունեության մասին արխիվային նորահայտ փաստաթղթերի հիման վրա:*

Անդրադարձներ եղան նաև Հայոց պատմության, ժողովրդագրության տարբեր խնդիրների լուսաբանմանը. Ա. Ակոպովը, *իր զեկուցումը նվիրելով Հայոց Բագրատունյաց թագավորության անկման պատճառներին, եզրահանգել է, որ Վասիլ II-ի շուրջ հիսունամյա հետևողական ու հեռատես քաղաքականության հետևանքով կայսրությունն առանց լուրջ ջանքեր գործադրելու ոչ միայն կարողացավ տիրանալ Դավիթ Կյուրապաղատի ժառանգությանը, այլև հող ստեղծեց հետագայում Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անին ևս կայսրությանը միացնելու համար, որն էլ հաջողությամբ իրագործվեց 1045 թ.:* Հ. Ամիրջանյանը *խոսեց Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի գործունեության,* Ֆ. Մովսիսյանը՝ *արևմտահայերի ազգային սահմանադրության ընդհանուր գծերի ու սկզբունքների,* Ա. Գասպարյանը՝ *Զաքարիա սարկավագ Քանաքեռցու Պատմության,* Հ. Սուքիասյանը՝ *1919 թ. Թիֆլիսի հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի աշխատանքների,* Մ. Նաջարյանը՝ *Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովում Կիլիկիայի (Սսի) կաթողիկոսության խնդրի մասին:*

*Արտերկրից ժամանած գիտնականների ուշադրության կենտրոնում հայ համայնքի կամ հայազգի հասարակական գործիչների դերն ու նշանակությունն էր տվյալ երկրի քաղաքական, հասարակական, տնտեսական կյանքի զարգացման մեջ: Այսպես. «Բաթումիում կապիտալիզմի զարգացման պատմությունից. Ա. Մանթաշև» (*Օ. Գոգոլիշվիլի, Թ. Պուդկարաձե, *Վրաստան), «Հայրերը չերքեզական հեծելազոր գնդի ռազմական տարեգրության մեջ» (*Ռ. Կանդոր – *Ռուսաստան), «Անեցիների գաղթը Ղրիմ և դրա թվագրումը» (*Տ. Սարգսյան, *Ռուսաստան), «Հայերի դերը XVIII–XX դ. սկզբին Հյուսիսային Կովկասի տնտեսական և քաղաքական զարգացման մեջ» (*Տ. Նևսկայա, *Ռուսաստան), «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը լեհ հեղինակների հրապարակումներում» (*Զ. Շմուրլո, *Լեհաստան), «Խարկովի հայկական համայնքը XIX դ. երկրորդ կեսին – XXI դ. սկզբին»* (Ա. Շպորտ*):*

Վերջին տարիներին բավական հաճախակի են դարձել անդրադարձները ծպտյալ (գաղտնի, թաքուն, կրիպտո) կամ այլախոս ու այլադավան հայերի հիմնախնդիրներին: Մասնավորապես, ուսումնասիրություններ են կատարվում ու հոդվածներ հրատարակվում թուրքացած, արաբացած, քրդացած, մահմեդական հայերի մասին: Այս համատեքստում ասորացած հայերի պատմությանն էր անդրադարձել Ա. Մալոյանը*:*

Բնակչությանը, նրա թվաքանակին, աճի օրինաչափություններին, կազմին, տեղաշարժերին և տարաբնակեցմանը վերաբերող տեղեկություններն ունեն երկրատնտեսական, աշխարհաքաղաքական ու գիտական կարևոր նշանակություն: Այս դրույթը հիմք ընդունելով՝ Ա. Բոյաջյանը *վերլուծել է Շիրակի մարզի բնակչության թվաքանակի և կազմի փոփոխություններն ըստ Հայաստանի Հանրապետության 2001 և 2011 թթ. մարդահամարի արդյունքների ու պարզել, որ մարզում հայերի թիվը նվազել է 30852-ով կամ 11 %-ով, եզդիներինը՝ 47-ով կամ 4,8 %-ով, իսկ ռուսներինն ավելացել է 52-ով կամ 4,9 %-ով:*

3. Ազգաբանություն

*Այս մասնաճյուղում աշխատանքներ ծավալեցին ազգագրագետները, բանագետները, թանգարանագետները: Հարուստ թեմատիկ-բովանդակային համատեքստում անդրադարձ եղավ Շիրակում ու Վանանդում օձի և օձամանուկի պաշտամունքի դրսևորումներին (*Ս. և Լ. Պետրոսյաններ*), հայ ժողովրդական հավատալիքներում և սնահավատական զրույցներում թպղայի դրսևորումներին (*Հ. Գալստյան*), Կարսի բանահյուսական ժառանգությանը (*Է. և Մ. Խեմչյաններ*), 1926 թ. Լենինականի և 1988 թ. Սպիտակի երկրաշարժերի համեմատական վերլուծությանը (*Թ. Աղանյան*), XX դարի 80-ական թվականների Շիրակի երաժշտական կենցաղին (*Հ. Պիկիչյան*), Գյումրի քաղաքի օրինակով՝ կրեատիվ քաղաքի էթնոհոգեբանական ասպեկտներին (*Կ. Սահակյան, Ռ. Հով-

հաննիսյան*), Գյումրու Սբ Յոթ Վերք և Սբ Նշան եկեղեցիների արտաքին և ներքին հարդարանքին (*Ք. Ավետիսյան*), Ալեքսանդրապոլում երեխաների սոցիալականացման ձևերին ու եղանակներին (*Կ. Բազեյան*), Դվինի կրթամշակութային կենտրոնի արժևորմանը (*Ն. Հակոբյան*), XIX դ. Շիրակում գերմանացի ճանապարհորդների բնագիտական և մշակութաբանական ուսումնասիրություններին (Հ.* Մելիք-Ադամյան*), Հայաստան ներգաղթած սիրիահայերի ազգագրական տեսանկյունին (*Ա. Ստեփանյան*):* Ա. Գյուլբուդաղյանը *խոսեց հանրակրթական դպրոցում հայ ազգագրության, ազգային մշակույթի դասավանդման մեթոդամանկավարժական հարցերի մասին:*

Հետաքրքիր տեսակետներով գիտաժողովին ներկայացան թանգարանագետները: Հաղորդումներով հանդես եկան. Ա. Ասոյանը՝ *Հուշային թանգարանների առանձնահատկություններ,* Մ. Հարոյանը՝ *Ս. Մերկուրովի տուն-թանգարանի Կ. Նիգարյանի հեղինակային ցուցադրության սեմիոտիկ վերլուծություն,* Լ. Գեվորգյանը՝ *ազգագրության բացօթյա թանգարանների ձևավորման սոցիալ-տնտեսական պատճառները,* Ա. Գրիգորյանը՝ *Շիրակի և Լոռու մարզի թանգարաններին՝ որպես կրթության ակտիվ տարածքներ,* Ա. Նազարյանը՝ *Գյումրու թանգարաններն առցանց հարթակում:*

4. Ճարտարապետություն և արվեստաբանություն

*Արվեստաբանները հիմնականում անդրադարձան Գյումրու ճարտարապետության ու կերպարվեստի արդի խնդիրներին, այդ թվում՝ Գյումրու գերեզմանատների հուշարձանների տիպաբանական և գեղարվեստական առանձնահատկություններին (*Ա. Գրիգորյան*), Խաչատակի աստիճանաձև հորինվածքների խորհրդաբանական ստուգաբանությանը (*Ա. Գրիգորյան*), Նախիջևանի Յոնայի Սբ Աստվածածին եկեղեցու արտաքին հարդարանքին (*Լ. Կարապետյան*), 1960-ականների Շիրակի գեղանկարչական դպրոցին, Գյումրու հետերկրաշարժյան մշակութային խնդիրներին (*Ա. Մարգարյան*), զարգացած միջնադարի հայկական պաշտամունքային ճարտարապետության մեջ Եղեգնամոր (Չանգլի) տաճարի դերին (*Դ. Նահատակյան*), անկախության տարիներին Հայաստանում ուսումնական շենքերի ճարտարապետության զարգացումներին (*Դ. Քերթմենջյան*):*

5. Բանասիրություն

Գիտաժողովի ամենաստվարածավալ մասնաճյուղը բանասիրությունն էր, որտեղ քննարկվեցին լեզվաբանական և գրականագիտական բազմաթիվ թեմաներ՝ վերլուծական, համեմատական, գրախոսական, հրապարակախոսական ուղղվածությամբ: Հանդես եկան ինչպես անվանի գիտնականներ, այնպես էլ երիտասարդ հետազոտողներ, որոնց աշխատանքները մեծ հետաքրքրություն և քննարկումներ առաջ բերեցին:

Գիտաժողովի շրջանակներում տեղի ունեցավ նաև հանդիպում Բեյրութի Հայկազեան համալսարանի նախագահ՝ դոկտոր Ա. Հայդոստյանի *և «Հայկազեան հայագիտական հանդէսի» խմբագիր՝ դոկտոր* Ա. Դագեսյանի *հետ, որոնք արդեն տարիներ ի վեր ակտիվ համագործակցում են ՇՀՀ ՀՀ կենտրոնի հետ: Կենտրոնի գիտաշխատողների կողմից կազմակերպած Հայկազեանի 36-րդ հատորի շնորհանդեսին տեղի գիտնականների հետ մեծ ոգևորությամբ մասնակցեցին նաև դրսեկ հյուրերը՝ ցուցադրելով երկու հայագիտական կենտրոնների միջև ստեղծագործական ու գիտական լուրջ կապերի գոյությունը և դրանք շարունակելու կարևորության գիտակցումը:*

Գիտաժողովն ուներ նաև մշակութային միջոցառումների մեծ ծրագիր. կազմակերպիչները մեծաքանակ հյուրերին հնարավորություն ընձեռեցին մասնակցելու «Գյումրու օրվա» միջոցառումներին՝ կենտրոնի ազգագրագետների կողմից ավանդաբար կազմակերպվող «Հացի տոնին», ազգային կերակրատեսակների պատրաստմանը և համտեսմանը, ազգագրական մի շարք այլ բովանդակալից միջոցառումներին, ինչը, կարծում ենք, անմոռանալի տպավորություն թողեց գիտաժողովի մասնակիցների, հատկապես, դրսեկների վրա:

ՍԵՐԳՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ